ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՊԱՏՄԱԲԱՆԸ
(Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

1928 թ. դեկտեմբերին Գորիս քաղաքում տոհմիկ հայկական ընտանիքում ծնվեց մի արու զավակ, որին անվանեցին Հրաչիկ: Դեռևս մանուկ նրան հրապուրողը եղան գիրն ու գրականությունը և դրան հավասար հայրենի եզերքը: Սակայն ընությունից առավել նրան հետաքրքրում էր հարազատ ժողովրդի պատմությունը, նրա հերոսական և ողբերգական դեմքերն ու դեպքերը: Պատահական չէր մասնագիտության ընտրությունը: Միջնակարգ դպրոցը Գորիսում ավարտելուց հետո երիտասարդն ընդունվեց Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1952-ին ավարտեց ուսումնառությունը և ապատանքային գործունեությունն սկսեց ծննդավայրում՝ սկզբում Գորիսի շրջանային թերթում, ապա շրջկոմում: Նա անցավ կուսակցական աշխատանքի տարբեր աստիճաններով. շրջկոմի հրահանգիչ, բաժնի վարիչ, շրջկոմի քարտուղար: Սակայն լայն էին երիտասարդ կուսաշխատողի հետաքրքրությունների ոլորտները: Ուսման անհագուրդ ձգտումը երիտասարդ Սիմոնյանին հասցրեց Մոսկվա, որտեղ 1959-ին ընդունվեց ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիա, որն ավարտեց 1961-ին և հենց այնտեղ, նույն թվին, պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն, ստացավ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Դարձյալ 1961-ին Մոսկվայում լույս տեսավ նրա առաջին գիտական աշխատությունը՝ "Перевооружение промышленности Армянской ССР в послевоенный период (1945 – 1950 гг.)":

Հայաստան վերադառնալով Հրաչիկ Սիմոնյանն աշխատանքի անցավ ՀԿԿ Կենտկոմին առընթեր կուսպատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող (1961–1966): 1966 թվականից 11 տարի նա տարբեր պատասխանատու պաշտոններ է վարել Հայկական ԽՍՀ Կոմկուսի Կենտկոմում: 1969-ին նա հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը և ստանում պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Մայրաստիճան բարեխիղճ, պատասխանատվության բարձր զգացումով աչքի ընկնող Սիմոնյանն իրեն վստահված աշխատանքները կատարում էր ուժերի գերագույն լարումով և հասցնում մինչև վերջ: Սակայն նա չէր կարող կտրել իր կապը գիտությունից, հոգու խորքում իրեն համարում էր նրա նվիրյալը. 1977 թ. նա վերադարձավ գիտական աշխատան-

քի և մինչև 1990 թ., տասներեք տարի շարունակ վարեց ՀԽՍՀ Կոմկուսին առընթեր Մարքսիզմ-Լենինիզմի պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնը (հետագայում այն վերանվանվեց հասարակական-քաղաքական հետազոտությունների ինստիտուտ): 1986 թ. Սիմոնյանն ընտրվեց Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ (իսկական անդամ ընտրվեց տաս տարի անց):

Հրաչիկ Սիմոնյանի, ինչպես նաև Հայաստանի ազնիվ մտավորականներից շատերի համար առանցքային և շրջադարձային եղավ 1988 թ. սկսված արցախյան շարժումը: Պատմաբանը, որ հետազոտական աշխատանքներ էր կատարել բազմաթիվ արխիվներում, քաջատեղյակ էր հարազատ ժողովրդի նկատմամբ կատարված մոտակա անցյալի անարդարություններին, իր ձայնը բարձրացրեց հօգուտ արցախահայության արդար պահանջների: Եվ պատահական չէր, որ 1990 թ. Լևոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի հետ Հրաչիկ Սիմոնյանն ընտրվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամ: Քաղաքական ալեբախումների այդ եռուն ժամանակաշրջանում նա իր դիտելիքներով ծառայեց հարազատ ժողովրդին. Սիմոնյանը Հայաստանի Հանրապետության զինանշանի և հիմնի ստեղծման ժյուրիի առաջին և գլխավոր անդամներից էր: Հասարակական լայն մասշտաբի գործունեություն ծավալեց նա իբրև Գերագույն խորհրդի պատգամավոր քննարկման ներկայացնելով իր կողմից կազմված մի շարք նախագծեր. այդ շարքում են Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու, հայոց ցեղասպանության դատապարտման, Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը չեղյալ հայտարարելու և այլ նախագծեր: Հրաչիկ Սիմոնյանի քաղաքացիական ազնվության և խիզախության մասին է վկայում մի հետաքրքիր փաստ: Համատեղ աշխատանքի ընթացքում նա գիտակցեց, որ ՀՀՇ-ի վերնախավը պայքարում է ոչ թե արցախյան հարցի արդարացի լուծման համար, այլ բռնազավթել է իշխանությունը: Նա համարձակություն ունեցավ Գերագույն խորհրդի նիստում ազգի մեղադրականը հնչեցնել և սահմանազատվել նրանցից: Ժամանակակիցներից շատերն են հիշում այդ ելույթը, որն օգնեց շարքային բազմաթիվ նվիրյալների հեռանալ ՀՀՇ-ից:

Չնայած ակտիվ հասարակական գործունեությանը, Սիմոնյանը միշտ հավատարիմ մնաց գիտությանը: Լայն և ընդգրկուն է նրա հետաքրքրությունների ոլորտը: Նրա գրչին են պատկանում ավելի քան 25 մենագրություններ և մի քանի հարյուր հոդվածներ: Սկզբնական շրջանում նրա հետազոտությունները կրում են փիլիսոփայական տեսական բնույթ: Հատկանշական են «Ինդուստրիալ հասարակության» տեսությունները, «Քննական վերլուծություններ» (1973 թ.), «Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» (գիրք 1 – 1977 թ., գիրք 2 – 1980 թ.), «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» (1982) և այլ գործերը: Գիտական հասունության հետ մեկտեղ Սիմոնյանն սկսում է հակվել դեպի իր արմատները հայ ժողովրդի պատմության կնճռոտ ու բարդ իրադարձությունների քննարկումը: Գիտական գործունեության գեռ սկզբում նրան հետաքրքրում է իր ժողովրդի այն հատվածը, որը զրկվել է հայրենիքից և սփռվել աշխարհի բոլոր ծայրերում: Ի՞նչ խմորումներ են կատարվում ազգային արմատներից լիովին կտրված, բայց նրա հոգեկան կերտվածքին անսահմանորեն նվիրված, իրա-

րից տարբեր այդ մարմիններում, որոնք բոլորը միասին կոչվում են մի ընդհանուր անունով՝ Սփյուռք: Այդ հարցին է նվիրված գիտնականի «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» ծավալուն հետազոտությունը, որը լույս է տեսել դեռևս 1968-ին:

Իրար հետ սերտորեն կապված են գիտնականի երկու աշխատություններ՝ «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» (1986) և «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (1991) ուսումնասիրությունները: Աղբյուրագիտական հարուստ հենքի, ժամանակի մամուլի և գիտական աշխատությունների օգտագործումով այդ երկու ուսումնասիրություններն աչքի են ընկնում գիտական խոր ընդհանրացումներով: Առաջին աշխատության մեջ բացահայտված է թուրքական բուրժուազիայի առաջացման և ձևավորման պատմական ժամանակաշրջանը, որը ճակատագրական և բախտորոշ եղավ հայ ժողովրդի համար: Հանգամանորեն քննարկված են օսմանիզմ, իսլամիզմ, պանիսլամիզմ, նոր օսմանիզմ, թուրքիզմ, պանթուրքիզմ հասկացությունները և դրանք ներկայացված իբրև թուրքական բուրժուազիայի գաղափարախոսության հիմնական տարրերը՝ տարբեր ժամանակահատվածներում: Հեղինակը համոզիչ փաստարկներով ցույց է տալիս, որ թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունն իր առանձնահատկություններով տարբերակվում է բուրժուական գաղափարախոսությունից ընդհանրապես: Այն իր մեջ ներառում է բուրժուական գաղափարախոսության ամենահետադիմական տարրերը և դրանով էլ կոչված է ծառայելու թուրք բուրժուազիայի շահերին: Աշխատության մեջ քննարկված են Թուրքիայում ծավալված սահմանադրական շարժման, արդուլհամիդյան «զուլումի» տարիների, պանիսլամիզմի որպես կայսրության պաշտոնական ուսմունքի հիմնահարցերը: Համեմատվում և բացահայտվում են պանիսլամիզմ ու պանթուրքիզմ հասկացությունները, ցույց է տրվում երիտթուրքերի պատմական թատերաբեմ իջնելը, նրանց ծավալած հակահայկական գործունեությունը, արևմտահայության կացությունը առաջին համաշխարհային պատերազմին նախորդող և հետագա տարիներին: Ուշագրավ է սակավ հայտնի փաստաթղթերի և թուրք պատմաբանների աշխատությունների միջոցով հայոց ցեղասպանությունը ծրագրելու ապացույցները: Դրա վկայությունն է Իթթիհատ կուսակցության Սալոնիկում 1910 թ. կայացած ժողովում դոկտոր Նազըմի առաջարկած ծրագիրը: Իր ելույթում նա շատ վճռականորեն է դնում այդ հարցը՝ կամ, կամ: Բազմաթիվ փաստերով հեղինակը ցույց է տալիս ինչպես թուրքական հեղափոխության զոհասեղանին վճռվեց մի ողջ ժողովրդի ճակատագիր, ինչպես չբավարարվելով իր նախորդների կատարածով «կարմիր հեղափոխականի թիկնոցը ուսերին գորշ դայլ» Մուստաֆա Քեմալը գործում էր պանթուրքիզմի գրոշի տակ՝ վերջնական նպատակը համարելով նաև արևելահայության ոչնչացումը:

Վերը նշեցինք, որ այս աշխատության հետ սերտ առնչություն ունի «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» աշխատությունը, որի մեջ հեղինակը, ներառելով նախորդ աշխատության հիմնական ելակետային դրույթները, շեշտը դնում է պանթուրքիզմի հայ ժողովրդի համար այսօր էլ խիստ վտանգավոր գաղափարախոսության մերկայման վրա: Այդ հարցն արդիական սուր հնչեղություն ստացավ արցախյան

շարժման ծավալումից հետո: Մանրամասն քննարկելով այդ հարցերը, հեղինակը հմտությամբ ցույց է տալիս, որ արցախյան շարժումը կրոնական հողի վրա ստեղծված շարժում չէ, ինչպես ցանկանում են հավատացնել «ինտերնացիոնալիստական» Ադրբեջանում: Մուսուլմանական բազմաթիվ երկրներում հայերը համերաշխ ապրում են այդ կրոնը դավանողների հետ (Սիրիա, արաբական հանրապետություններ, Իրան, Իրաք և այլն): Այլ է պանթուրքիզմի գաղափարախոսությունը և դրանից եկող վտանգը ոչ միայն հայերի, այլ նույնիսկ իսլամը դավանող ոչ թուրք ժողովուրդների համար: Այդ հարցերի քննարկումը հեղինակը հասցնում է մինչև XX դարի վերջը՝ բացահայտելով ժամանակակից Թուրքիայի քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ և դրա հետ սերտ առնչվող ադրբեջանական ազգայնամոլների պատրանքներն ու ակնկալիքները Թուրքիայից: Աշխատության վերջում հեղինակը սուր քննադատության է ենթարկում Խորհրդային Միության կենտրոնական իշխանություններին Սումգայիթի և Բաքվի հայության նախճիրը կազմակերպելու և թողտվության համար, անարգանքի սյունին գամում ադրբեջանական «անպատժելիության» սինդրոմի հեղինակներին: Եթե նկատի ենք առնում գրքի հրատարակության թվականը՝ 1991 թ., ապա պարզ կդառնա, թե ինչ նշանակություն ունեցավ այն ընթերցող լայն հասարակության համար:

Հետագա տարիներին Հր. Սիմոնյան գիտնականի հետազոտություններն ուղղված էին հարազատ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների ծավալմանը XIX դարի երկրորդ կեսին: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի խորհրդանիշ մեծ հայդուկապետ Անդրանիկը և նրա ժամանակը դարձան համանուն երկհատորանոց աշխատության թեման: Այն լույս տեսավ 1996-ին: Ժողովրդական հերոսի մասին հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ և՛ Խորհրդային Հայաստանում (մանավանդ 70-ականներից սկսած) և՛ Սփյուռքում: Սակայն Սիմոնյանի այս մենագրությունն իր առանձնակի տեղն ունի այդ հսկա ցուցակի մեջ: Հեղինակին հաջողվել է ոչ միայն նոր խոսք ասել անվանի զորավարի ողջ գործունեության մասին, այլև արտակարգ խորությամբ մեկնաբանել արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ալեբախումները: Արդարացված է աշխատության խորագիրը՝ «Անդրանիկի ժամանակը»: 1865–1927 թթ. հայ հասարակական-քաղաքական կյանքի, ազատագրական պայքարի բազմաթիվ իրադարձություններ են լուսաբանված այս աշխատության մեջ: 14 գլուխներից բաղկացած այս երկհատորը ամենայն իրավամբ կարելի է համարել ժողովրդական հերոսի համար կանգնեցված ամենափայլուն հուշարձաններից մեկը: Իր բոլոր մենագրություններում Սիմոնյանն ընթերցողին ներկայանում է իբրև հայերենին լավ տիրապետող գիտնական. այլ է այս աշխատությունը, որտեղ հեղինակի գրչի տակ փայլում է հայոց լեզվի ճոխությունը, հարստությունը, վեհությունը: Այդ աշխատությունը կլանում է ընթերցողին խորությամբ, դիտական բարձր մակարդակով և արտակարգ լեզվով:

Թվում էր գիտնականը լիովին կարող է հանգստանալ իր հասած բարձունքներին: Սակայն ընթերցող հասարակությանը Սիմոնյանը մատուցեց նոր «անակնկալ». 2003 թ., մի երկու ամիս առաջ լույս տեսան հեղինակի նոր՝ «Ազատագրական պայքարի ուղիներում» մենագրության առաջին և երկրորդ հատորները: Խորագրից անմիջապես հետո ընթերցողը տեղեկա-

նում է, որ աշխատությունը պետք է լինի քառահատոր: Գրքի երկու հատորները նվիրված են 1905–1907 թթ. ժամանակահատվածին (I գիրք 1905 թ. հունվար – 1906 թ. օգոստոս, II գիրք 1906 թ. օգոստոս – 1907 թ. հուլիս): Եթե նշենք, որ ամեն մի հատորն ընդգրկում է 50 տպագրական մամուլից ավելի ծավալ, ապա պարզ կդառնա, թե գիտական ինչ բարեխղճությամբ ու բծախնդրությամբ է շարադրված այդ ժամանակահատվածի հայ ժողովրդի պատմությունը: Աշխատությունն առանձնահատուկ է նրանով, որ հայ ժողովրդի պատմությունը չի մասնատվում արևելահայ և արևմտահայ հատվածների: Պատմական իրադարձությունները շարադրվում են միասնական՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի պատմության հետնախորքի վրա, այդ հսկայածավալ տարածքում հայ ժողովրդական զանգվածների, նրանց պայքարը կազմակերպող ազգային կուսակցությունների կատարած գերի մանրակրկիտ բացահայտումով: Քննարկված են ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության ազդեցությունն ու արձագանքները, Թուրքիայի և Պարսկաստանի աշխատավոր զանգվածների դարավոր նիրհից արթնանալու փորձերը ու այդ գործընթացում հայերի խաղացած գերը: Ընթերցողին զարմացնում է այդ երկու հատորների աղբյուրագիտական հենքը, արխիվային տարբեր հաստատություններից օգտագործված մեծաքանակ վավերագրերը, առանց չափազանցության, հարյուրավոր անձնավորությունների մասին տված տեղեկատվությունները: Դեռևս ժամանակ չի եղել հավուր պատշաճի գնահատել այս աշխատությունը, նրա մասին դեռևս կգրվեն գրախոսություններ:

Հրաչիկ Սիմոնյանին կարելի է դասել մեր դասական գիտնական-հետազոտողների շարքը: Իր աշխատություններով ևս նա հարազատ ժողովրդի արդար պայքարի նվիրյալ զինվորի պարտքն է կատարում:

Գիտական այս աշխատություններին զուգահեռ Հրաչիկ Սիմոնյանը երկար տարիներ դասախոսական աշխատանք է կատարել բարձրագույն ուսումնական տարբեր հաստատություններում. վարել է Երևանի պետական համալսարանի Հայ ժողովրդի պատմության ամբիոնի աշխատանքները, դաստիարակել և հասունացրել է ուսանողների տարբեր սերունդներ, եղել բազմաթիվ ասպիրանտների գիտական ղեկավարը. այդ ասպիրանտների մեծ մասը այսօր գիտության թեկնածուներ և դոկտորներ են: Նա մեծ աչալրջությամբ հետևել է նաև գիտական պարբերականներին, եղել է շատ ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ: Հրաչիկ Սիմոնյանը վարել է նաև ՀՀ ԳԱԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնը:

Այսօր էլ մեծարգո ակադեմիկոսն աշխատում է երիտասարդական ավյունով և շուտով ընթերցողի սեղանին կդնի քառահատորի վերջին երկու հատորը: Հարգարժան գիտնականին ցանկանք երկար տարիների ստեղծագործական բեղմնավոր գործունեություն ի փառս հայ պատմագրության և մեր ժողովրդի:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ